

ԱՅԱՍՏԱՊՈՀԱՔԻԹՅԱՆ

**Կ Ե Ր Ի Բ Ա Զ Ա Ն**

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ПОСТОРОНЕДЕЛІНН  
Академії Наук  
СССР

Գ Ե Ց Տ Ր Ա Ց  
ՕԵՐԵՎԱՆ 1981

636-04

2-15

636.04

Դ-15

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳՐԱԴԱՐԱՆ

№ 43(143) ԳՅՈՒՂԱՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՐԱՄԱՏՁԵԼԻ ԳՐԱԴԱՐԱՆ № 43(143)

ՅԵՐԵՎԱՆ

**ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ  
ԿԵՐՊԻ ԲԱԶԱՆ**



ԳԵՏՀՐԱՑ

1981

ՅԵՐԵՎԱՆ

1.8 .06. 2013

21749



# 1. ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

«...Մենք չենք լուծի անառաջահռտյան խնդիրը ստանակ համապատասխան կերի բազա ստեղծելու»:

«... Վորաբեսզի կովը տա ներկայիս չափով կաթ  
(տու 100 կելո տարեկան), նրան հարկալոր և 1700  
կերի միավոր (վերածված հատիկի): Բայց, վորսկեսզի  
նույն կովը տա լինենակի քանակությամբ կաթ, կերը  
պետք և շատացնել միայն 30 տոկոսով, (այլ վո՞չ կը բ-  
ինապատիկ, ինչպես կարող ե թվալ առաջին հայաց-  
քից): Իսկ վորաբեսզի կովը յեռապատկի կաթի քանա-  
քից յունը, արվող կերը, պետք և ավելացնել միայն  
60-65 տոկոսով»:

«... Հեշտ և պահել աղիքացնել կոմի կերը 30 տոկոս  
սով և կատանան կրկնակի չափով կաթ : Աժքողջ խռո-  
գիրն այն եւ, թե ինչը հաշվին պետք եւ կատարել այդ  
հավելումը : Ճիշտ այդպիս եւ զրված եւ խնդիրը խողի  
վերաբերյալ, Գիրախտաբար մեղ մոտ ընդունված եւ ա-  
սել, վոր խողի համար կեր չի պահանջվում : Նա ինքը  
պիտք եւ պահի այդ : Մի գուցեց ներկայիս զրության հա-  
մար կարող եւ լինել ճիշտ, բայց այդ հիման վրա մենք  
չենք կարող լուծել մսի պլորեմը :

Ազար վո՞րն և մեր ծրագիրը: Մեր անօսնարուծական նետախուռը հաշվել ե, Վրութեազի լուծվի կաթէ և Թի դարձածության երկեալուավետոն ինչիքը: Հայո-

Պահպատճե տպարան  
Հրատ. № 1834  
Գլուխիս 6839 (թ)  
Պատվեր 5001  
Տիրած 7000



61242-62

կազմոր և ավելացնել մեր յերկրի կերի հնաբավարաւ-  
թյունները մեկ և կես անդամ։ Այս խնդրի ամբողջ ի-  
մասը կայանում և նշնչնում, վոր ավելացնել մեկ և  
կես անդամ, դա բնավ չի նշանակում, այսքան միլիոն  
դարմանին հարկավոր և ավելացնել 50 տոկոս նույն  
դարմանից։

«... Զպետք և մոռանալ, վոր ներկայիս կերերի  
ավելի քան յերկու յերրորդ մասը կոպիտ կերեր են,  
այսինքն՝ խոտ, դարման, ծղոտ և այլն, մինչդեռ մսի  
և կաթի մեքենայի արդյունավետ աշխատանքի համար  
պահանջլում են, վոր կերերի ընդհանուր քանակի յերկու  
յերրորդ մասը ուժեղ և հյութավի կերեր լինեն։

«... Իսկ այդ նշանակում և ԽՍՀՄ գյուղատնտե-  
սության զարգացման ամբողջ հնդամյակը պետք է  
վերանայվի այն կերպ, վորակեսվի լրացուցիչ կերպով  
առահօվված լինի ամենափիլը՝ 40 միլ. հեկտար կե-  
րի կուլտուրաների ցանքը։

«... Յեթե մենք այդ խնդրը զիտակցենք իր ամ-  
բողջ լայնությամբ, յեթե մենք այդ խնդրի իրազործ-  
ման ձեռնարկենք նույն ուժով և հներգիսայով, ինչ-  
պես մենք լուծեցինք և լուծում ենք հացահատիկի  
պրոբլեմը, յեթե մենք ամբողջովին առահօվենք այդ  
ծրագրի իրագործումը, կանգ չառնելով վոչ մի դժվա-  
րությունների և ծախսերի առաջ, մենք այդ նոր խըն-  
դերը՝ նոր հնդամյակի-կերի կուլտուրաների տարա-  
ծության 40 միլիոն հեկտարի լայնացումը և արոտ-  
ների ու խոտհարքների բարելավման համար անցկաց-  
վելիք ձեռնարկումներն ամբողջ տերրիտորիայի վրա,  
առկասկած ամբողջովին կիրագործենք և դրանով իսկ  
կապահպենք բոլոր հնաբավորությունները՝ լուծի-

լու ջոկ և կաթի միջացների կրկնապատկման բնուկ-  
քը։ (Ընկ. Յակովլեմի զեկուցումից Համ. Կ (բ) կ 10  
համագումարում («Կոլխոզարժությունը և գյուղատնտե-  
սության վերելքը»)։

## 2. ԿԱԶՄԱԿԵՐՊԵՆՔ ԿԵՐԻ ԲԱԶԱՆ.

Ինչպես Համ. ԿԿ (բ) 16-րդ համագումարը, նույն-  
պես և ԽՍՀՄ Առուրդների 6-րդ համագումարը քըն-  
նության առնելով կոլտնտշինարարության և գյուղա-  
տնտեսության դարպացման խնդիրները, հատկապես  
ուշադրություն դարձրեց սոցիալիստական վերակա-  
ռուցման վրա այն հաշվով, վորակեսվի շատ կարճ ժա-  
մանակամիջոցում լուծվի մեր աշխատավորության  
մսի և կաթնամթերքների գործածությունը կրկնապատ-  
կելու խնդիրը։

Հիմնականում հացահատիկի պրոբլեմի լուծումը  
կարծ ժամանակամիջոցում ցույց տվեց, վոր մենք մսի  
և կաթնամթերքների խնդիրը նույնական հաջողությամբ  
կարող ենք լուծել, յեթե այս նոր և կարեվոր խնդրի  
լուծման համար մեր խորհրդային վողջ հասարակու-  
թյան մասնակցությունը լրիվ կերպով ապահովինք։  
Անանապահության վերակառուցման և դրա հետ միա-  
սին նրա քանակի և արտադրանքի ավելացման խնդի-  
րը՝ ամենամեծ չափով կապված և կերի բազայի կաղ-  
մակերպման հետ։

Այժմ, յերբ հատուկ ուշագրություն և դարձվում  
առնանապահության զարգացման վրա, կոլտնտեսու-  
թյուններում ու խորհանտեսություններում անասուն-  
ներին կեր հայթայթելու խնդիրը պետք է հատուկ ու-  
շագրության առնվի մեր բոլոր կազմակերպություն-  
ների կողմից։

Այս դրքաւյիկի նորատակն և մեր կողմանեաւական և  
բորբանտեռական ակտիվին համառոտ կերպով ցույց  
տալ, թե վորո՞նք են մեզ մոտ կերի բազա ստեղծելու  
աղբյուրները և թե ի՞նչպես կազմակերպել կերի բա-  
զան :

### 3. ԱՐՈՏՆԵՐԻ ՅԵՎ ԽՈՏՀԱՐՔՆԵՐԻ ԿՈԼԵԿ- ՏԻՎ, ԽՆԱՄՔՆ ՈՒ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ

#### ա) Ի՞ՆՉ ԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵՆ ՄԵՐ ԱՐՈՏՆԵՐՆ ՈՒ ԽՈՏՀԱՐՔՆԵՐԸ

Մեզ մոտ՝ Հայաստանում անասունների կերի հիմ-  
նական բազան են համովանում բնական արոտներն ու  
խոտհարքները։ Դրանք թեև շատ մեծ տարածություն-  
ներ են բոնում, սակայն, իրենց արտադրողականու-  
թյամբ չեն բավարարում մեր ունեցած անասուններին  
ամբողջ տարին և դրա հետեւանքով մեր անասուննե-  
րը ձմեռը պահպանում են կիսաքաղց կամ յերբեմն ել քաղ-  
ցած վիճակում։

Ինչպես հայտնի յէ, ցորենի, բամբակի կամ այլ  
կուլտուրաններից բարձր բերք ստանալու համար ան-  
հրաժեշտ ե կատարել մի շարք կարեվոր աշխատանք-  
ներ, այսինքն՝ վարել, վույսել, պարարտացնել, ջրել  
և այլն։ Բացի այդ, պայքարել վնասառունների և հի-  
վանդությունների դեմ։ Մինչդեռ տասնյակ և հարյու-  
րավոր տարիներ ոգտագործելով արոտներն ու խոտ-  
հարքները, յերբեք չենք մտածել, վոր դրանք նույն-  
պես կարիք ունեն թե՛ պարարտացման և թե՛ մշակ-  
ման ու խնամքի։ Ահա այդ և պատճառը, վոր մեր ա-  
րաններն ու խոտհարքներն այժմ որ ըստորե աղքա-  
տանում են, հյութվում ու քիչ բերք առլիս։ Նբանցին

մի մասն այն դրության և հասել, վոր քաղիվ թե չնա-  
րավոր լինի նրանց վերականգնել, իսկ մյուս թառը,  
վորը կազմում և արոտների գերակշռող մասը, յեթե  
այժմյանից չսկսենք խնամել ու բարելավել, նույն-  
պես կարող են նույն դրության հասնել և մենք կզբու-  
մենք մեր լեռնային հիանալի արոտներից։

Արոտների ու խոտհարքների փշանալու պատճառ-  
ներից մեկն այն ե, վոր չնայած ամեն տարի բույսե-  
րը հողից վերցնում են մնադարար նյութեր, սակայն,  
դրանք վոչ մի կերպ այլևս չեն վերադարձվում հո-  
ղին, և դրա հետեւանքով անընդհատ պակասում և  
հողի մեջ յեղած մնադարար նյութերի քանակից։ Յեր-  
կարդ պատճառն այն ե, վոր տարիներ շարունակ շատ  
վաղ գարնանից մինչեւ ուշ աշուն մինենույն տեղում  
անընդհատ արածնցնում են անասուններին, առանց  
նրա վրաբերմամբ վսրեւ խնամք տանելու։ Արոտնե-  
րի հողը յերկար ժամանակ տրորվելու հետեւմնագով,  
պնդանում, խտանում ե և նրա վրա առաջ են գալիս  
շատ խիստ ճիմեր, իսկ ընդհակառակից, լավ, սնըն-  
դարար խոտերի արմատներն սկսում են առ-  
ձել և նրանց մեծ մասը վոչնչանում ե ողի  
պակասության պատճառով։ Այս բոլորի հե-  
տեւվանքն ել լինում ե այն, վոր արոտներն ու խոտ-  
հարքները ծածկվում են մամուններով, ճահճանում  
են և լավ խոտերի փոխարեն միտում են աճել թթու,  
կոպիտ և թունալոր բույսեր։ Առաջ են գալիս մեծ տա-  
րածությամբ ճիմեր, վորտեղ բուսնում են զանազան  
տեսակի վերաբեր ծածկված թիմեր, վորոնց անասուն-  
ները չեն ուսառում։

Բ) Է՞ՆՉ ՊԵՏՔ Ե ԱՆԵՆ ԽՈՐՃՅՆՑԵՍՈՒԹՅՈՒՆՆ-  
ՆԵՐՆ ՈՒ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վորակեսզի մեր արոտներն ու խոտհարքները փըր-  
կնք հետադայում փշանալուց, անհրաժշտ և լուրջ և  
սիստեմատիկ կերպով ճեռնարկել նրանց խնամքելու  
աշխատանքներին և, բացի այդ, հիմնովին կաղմակեր-  
պել նրանց բարելավման գործը, այն ե՝ հողի մշակելն  
ու պարարտացնելը:

Սնասնապահական բոլոր տնտեսությունները պետք  
ե զբաղվեն արոտների բարելավման խնդիրներով և  
կարծ ժամանակամիջոցում ճեռնարկեն այդ աշխա-  
տանքներին: Ամենից առաջ և այժմ յանից իսկ այդ աշ-  
խատանքներին պիտի ճեռնարկեն խոչոր կուտանուեսու-  
թյուններն ու խորհանտեսությունները, վորոնք ար-  
դեն այդ աշխատանքները կատարելու համար ունեն  
բավականաչափ ինվենտար, բանվորական ուժ և հեշ-  
տությամբ կարող են ստանալ պարարտանյութեր, սեր-  
ժեր և այլն:

Արոտների ու խոտհարքների խնամքով զբաղվող  
կողանուեսությունների առաջին աշխատանիքը պետք է  
լինի՝ արոտներն ու խոտհարքները մաքրել մեծ քա-  
րերից, դանաղան աղբից և արմատախիլ անել ամեն  
տհակի փշոտ և թունավոր թփերը: Այդ բոլոր աշ-  
խատանքները պետք է կատարել վորցիրով, կացին-  
ներով ու նիդերով: Հավաքած քարերը, թփերը և աղ-  
բը պետք է հեռացնել արոտներից, իսկ գրանց հավա-  
քելու հետեւ պահպանով առաջացած փոսերը պետք է լցնել  
հողով և հավասարեցնել ընդհանուր մակերեվույթի  
հետ: Կարտած թփերը կամ պետք է այրել և մոխիքը  
հավասարաչափ չաղ տակ հողի յերեսը կամ թե՛ թող-

նել, վոր փտի և առա շաղ տակ (յեթե շատ ե, կարե-  
թի յե ոգտադործել վորպես վառելափայտ):

Այս աշխատանքներին պետք է ձեռնարկել այն  
ժամանակ, յերբ գյուղատնտեսական մյուս աշխա-  
տանքները վերջացել են, վորպեսզի հնարավոր լինի  
ժիանդամից շատ բանվորական ճեռքեր տրամադրել:   
Այս բարեկավման հետևանքով մի կողմից կավելանա  
արոտների տարածությունը և մյուս կողմից՝ կրար-  
ձրանա նրանց արդյունավետությունը:

Յերկրորդ աշխատանիքը պետք է լինի խոնավ և  
ճահճուա տեղերի չորացումը: Դրա համար պետք է  
պատրաստել 2 տեսակ առուներ՝ փոքր կամ յերկրոր-  
դական առուներ և մեծ կամ դիմավոր առու: Փոքր  
առուների միջացով հավաքված ջրերը թափվե-  
լու յեն դիմավոր առվի մեջ, իսկ դը-  
իավոր առվում հավաքված ջրերը հոսելու յեն դե-  
պի դետերը կամ թե ոգտադործվելու յեն վորոգման  
նպատակով: Առուները պետք է ունենան վորոշ թե-  
քություն, վորպեսզի ճահճուա հետեւ ջրերը հետու-  
թյամբ դուրս հոսեն: Խոնավ և ճահճացած տեղերի չո-  
րացման աշխատանքները պետք է սկսել դարնան վեր-  
ջերից կամ ամառվա սկզբներին, վորովհետև այդ ժա-  
մանակներին և միայն, վոր հնարավոր և վորոշել չե՛  
շատ կամ քիչ լինելը, վորի համապատասխան ել պետք  
և տառուները պատրաստել:

Թեև ճահճուա տեղերը չորացնելուց հետո նրանց  
վրա շատ և հեշտանուամ խոտ քաղելը կամ թե անսա-  
ռուներն արածացնելը, սակայն պետք է անպայման  
նկատի ունենալ, վոր այդ տեղերի բերքատվությունն  
անմիջապես չի բարձրացնում, այլ գա տեղի յե ունե-

հում առաջազն 2-3 տարուց հետո, վսրոշագում, այդ տեղերում յեղած թթու բաւյսերի վոչնչանալու և նրաց տեղը քաղցր մարդաշնոնային սիզախտերի տռաջ գալու համար առնվազն 2-3 տարի և հարկավոր:

Այս յերկու աշխատանքները, վորոնց մասին խոսեցինք, կիշլում են «արտների ու խոտհարքեների հասարակ բարելափում»: Այս աշխատանքները մեր մարդագետիների համար կարենոր են, անհետաձեկլի և նույնիսկ պարտադիր, յիթե չենք ուզում նրանցից զրկել:


Բայց պետք ե առել, վոր այս ձեռնարկումները, համեմատաբար քիչ ողուտ են տալիս և համարյա թե բոլորովին չեն վերափոխում այն մեծ ճիմերը, վորոնց մասին վերելում խոսեցինք: Այդ պատճառով մեր անասնապահական կոլտնտեսությունները չպետք ե բավարարվեն դրանցով, այլ պետք ե ձեռնարկեն նաև այն աշխատանքներին, վորոնք կոչվում են «արտների ու խոտհարքեների պարզ մակերեսային բարելափումը» և «քարդ արմատական բարելափում»:

Այդ յերկու ահօնակ բարելափումների նպատակն է արտներում և խոտհարքներում յեղած ճիմերի հողը ժակելու միջոցով ստեղծել նորմալ պայմաններ հողի բերիությունը բարձրացնելու համար:

Մակերեսային բարելափումը կարելի յէ կատարել յերեք ձեփով՝ ա) միայն վոցիսելով, բ) վոցիսելով և պարարտացնելով և գ) վոցիսելով, պարարտացնելով և վորոշ քանակությամբ մարդաշնոնային լավ բույսերի սերմեր ցանելով:

Փոցիսելու միջոցով խտացած ճիմերը ուժիքում են (կորավում են), հովաքվում են, մամուռները և ուս-

րիչ մանրամունքը վատ-վնասակար բաւյսերը, և այդ բավական փինքացլում ե և բույսերի չնչառության հումար ստեղծվում են նորմալ պայմաններ: Պետք ե փոցիսել սովորական դիլ-զաղ փոցիսերով կամ մարդագետնային հատուկ (Լատկի, Առւրասի և ուրիշ) փոցիսերով: Հայվագլած աղբը պետք ե այրել և մոխիրը հավասարաշափ չաղ տալ արոտում: Այս աշխատանքները պետք ե կատարել գարնանը, ձյունը հալչելուց հետո, յերբ հողը բավական չորացած կլինի և փոցիսերու ժամանակ հողը չի կաչի փոցիսի առամներին,



Նկ. 1. Լատկերի տեսակի փոցիս

կամ թե աշնանը՝ մինչեվ ցրտերն ընկնելը—սկսած ողուսոսուի վերջերից մինչեվ հոկտեմբերի կեսերը: Աշնանը փոցիսած տեղը գարնանը կրկնափոցիս անել այնքան անդամ, մինչեվ վոր հողի մակերեսը կսեվանաւ (մոտավորապես 4-6 անդամ):

Յեթե ցանկանում եք մակերեսային բարելափումից շատ արդյունք ստանալ, ապա փոցիսելուց առաջ հարկավոր ե արոտը կամ խոտհարքը պարարտացնել և յիթե հարավոր ե, վորոշ չափով ել խոտարույների սերմեր չաղ տալ:

Պարարտացնել կարելի յէ որդանական և հանգա-

յին պարագատանյութերով։ Արդանական պարագատանյութերից մարդադեսինների համար լավ են գոմաղբը, գոմաղբահյութերը և կոմպոստը, իսկ հանքային պարագատանյութից՝ սուպերֆոսֆատը, ցիանամիռը, սելիմարան և սովորական մոխիրը։

Գոմաղբը մեկ հեկտարին պետք է տալ 12-20 տոնն, ընդ վորում այն պետք է լինի մանր և փտած։ Մարդադեսինների համար ամենից լավը՝ ձիու աղբն է։ Գոմաղբը պիտի փոել փոցինելուց մի յերկու որ առաջ։

Գոմաղբահյութը ջրի մեջ լուծված անասունների մեզն է, վորն ուրիշ յերկրում վաղուց ի վեր գործ է ածվում, վորպես պարագատանյութ, և մեծ եֆֆեկտ է տալիս։ Մեկ հեկտարին պետք է տալ 50-60 տակառ։

Կմլպոստը նույնպես լավ պարագատանյութ է, մանավանդ, վոր այն կարող են ունենալ բոլոր տնտեսություններն՝ առանց վորեև ավելորդ ծախսի, յեթե դրա պատրաստելու վրա ուշադրություն դարձնեն։ Մեկ հեկտարին արվում է 150-300 տոնն (900-1,800 կ.)։

Հանքային պարագատանյութերը պետք է տալ խառնուրդով, վորովհետեւ յուրաքանչյուր տեսակ պարագատանյութ մի վորոշ նյութով և հարստացնում հողը. իսկ մենք դիտենք, վոր բույսերը մի քանի հիմնական սննդանյութերի (աղոտ, կալի, Փոսֆոր) կարիք են զգում։ Մեկ հեկտարին արվում է 10-15 տեսաներ՝ խառնուրդով։

Սերմելու համար պետք է ընտրել լավ խոտաբույսերի սերմերի խառնուրդ և այդ խառնուրդը կազմելիս նկատի ունեղի կլիմայական և մարդադեմների պայմանները։ Խառնուրդի համար լավ է վեր-

դնել կարմիր ու սպիտակ յերեքնուրկի, տիմոֆեյնվկայի, աղվեսապոչուկի, ցործնուրկի, վոզնախոտի և ուրիշ լավ կերարույսերի սերմեր։

Մակերեսային բարելավում կատարվում է գլխավոր ախալիսի անդերում, վորտեղ ճիմերի ու մամուռների շերտը 0-6 սմ։ Հի անցնում, յերբ ճիմերի տակի հողը քիչ թի շատ փուխը է, յերբ հողը բավական խոնավ է յերբ արուներում ու խոտհարքներում դեռ գերակշռում են լավ բույսերը։ Այս գեղքում մակերեսային բարելավումը տալիս է շատ լավ արգունք և բերքավությունը, հենց առաջին տարուց, բարձրանում է։ Իսկ մյուս բոլոր գեղքերում հարկավոր և կատարել արմատական բարելավում։ Արմատական բարելավման ժամանակ անհրաժեշտ է հերկելու միջոցով վոչնչացնել արուների ու խոտհարքների բոլոր հին ճիմերը։ Հերկելու համար գործ են ածվում մարդադեսային հատուկ գութաններ, վորոնք հողի շերտը շատ լավ չուռ են տալիս։ Մարդադեսինները պետք է հերկել միայն այն ժամանակ, յերբ հողի շերտը բավական հասած է։ Պետք է հերկել աշխանը՝ մինչիվ ցրտերի ընկերը, իսկ զարնանը՝ միայն փոցինել։ Դրանից հետո ցանել լավ խոտաբույսերի սերմերի խառնուրդ։ Մինչեվ ցանելը լավ կլինի հողը պարագատացնել, բարելավելուց հետո, կոլեկտիվները կարող են ստանալ կուլտուրական մարդադեսիններ, ինչպես խոտ քաղելու, նույնպես և անասուններ արածացնելու համար։ Դրանից հետո պիտի հետեւվել, վոր բարելաված մարդադեսինները՝ նորից չփչանան, ապա ժամանակ առ ժամանակ անհրժեշտ է տանել վորոշինամք՝ փոցինելու և յերբեմն ել պարագատացներու միջնորդ։

Հատկապես անհրաժեշտ է ուշագրություն դարձնել, վրաբեաղի վաղ գարնանը, ինչպես և ուշ աշնանը անասուններ չարածացվեն, վորովհետեւ խոնավ արտաներում անասուններն արածելիս տրորում են խոտը և չեն թունում, վոր լավ բուսականությունը նորմալ կերպով մնի, դրա հետեւվանքով ել շատ հաճախ բռւյ-սերի մեծ մասը արմատից խակ մոհնչանում է:

#### 4. ԽՈՏԱԲՈՒՅՍՆԵՐԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բնական խոտհարքներից ստացվող խոտի համեմատաբար քիչ լինելը և այն մեծ հեռավորությունից աեղախոխելու գդավարություններն են պատճառը, վորանհրաժեշտ են դարձնում ցանովի խոտաբույսերի մըշակումը։ Խորհրդային և կողեկտիվ տնտեսություններում ցանովի խոտաբույսեր մշակելը բացի կերի խնդիրը լուծելուց, ունի նաև այն նշանակությունը, վոր դրանցից թիթեռնածաղիկ բույսերը հողը հարստացնում են բոլոր բույսերի համար ամենաանհրաժեշտ նյութով — աղոտով, բավացնում են հողի կազմությունը, վարի հետեւանքով դրանից հետո ցանվող կաւլտուրական բույսերը մեծ բերք են տալիս։ Բացի այդ, կուլտուրական մարդաբետիններից ստացված խոտն ավելի շատ սննդաբար նյութեր են պարունակում եր մեջ և անառուններն այն ուտում են ամբողջովին՝ առանց մնացորդի ու մեծ ախորժակով։ Մինչդեռ բնական խոտհարքներից ստացված խոտն իր մեջ պարունակում են վորոշ քանակությամբ կոչտ մասեր, վորոնք առմարսելի և սննդաբար են անառունների համար։

Ծանովի խոտաբաւյսերը լինում են բաղմամյա և

Ժիամյա : Միաժյա բույսերը բերք առվիս են հենց ու  
ուաշին տարին, վորից հետո նրանք մեռնում են, իսկ  
բաղմամյա բույսերը բերք տալիս են կամ առաջին  
տարվանից, կամ թե յերկորդ տարվանից, վորից հե-  
տո 3-8 և ավելի տարիների ընթացքում ոգտագործ-  
վում են՝ առանց կրկին անդամ ցանելու : Մեզ մոտ  
մշակվող խոտաբույսերից շատերը լավ մշակելու դեպ-  
քում տառիւն են տարեկան 3-5 հունձ :

Կուլտուրականացված ցանովի էռապառույսեր շատ  
կան. դրանք մեկը մյուսից տարբերվում են իրենց  
բերքատվությամբ, չողի և կլիմայական պայմանների  
նկատմամբ ունեցած պահանջներով և այլն։ Մենք  
կլսուինք դրանցից մի քանիսի մասին, վորոնք մեզ մոտ  
արգեն մշակվում են և հանաչված են վորպես լավ  
կերպառույսեր։

## ՑԱՆՈՎՀԻ ԽՌՏԱԲՈՒՅՍԵՐ

1. Առվույտը շատ հին ժամանակներից ե մշակ-  
վում Հայաստանում: Առվույտը ցանլում և ինչպես  
ձմեռվա խոտի պաշար ունենալու, նույնպես և կանաչ  
դրոթյամբ անասուններին ուժեցնելու համար: Առ-  
վույտը բազմամյա բույս է, մի անգամ ցանելուց հե-  
տո կարող է մնալ մինչեւ 20 տարի: Վայրի վիճակում  
կարելի յե պատահել համարյա ամեն տեղ: Առ-  
նրան կարելի յե պատահել համարյա ամեն տեղ: Առ-  
վույտը մի քանի անգամ ջրելու դեպքում այնքան ա-  
րագ է աճում, վոր կարելի յե 3-5 անգամ հնձել: Նրա  
արմատը շատ յերկար է, հողի մեջ կարող ե դնալ մին-  
չև 15 մետր խորությամբ: Յողունը հիմքից լավ ճյուղ  
զավորվող է և բարձրանում է մեկ մետրից ավելի:  
Չափոված համարյա են լինում կլոր փնջերով և

կտպույտ մանիչակագույն յեն։ Առվույթը առօք յերկու բույս ե։ ցրտադիմացկում չե։ Հողի նկատմամբ



նկ. 2. Առվույթ (Յուշա)


պահանջնութ չե, վարովհետեւ, ինչպիս ասացինք, արժանաները շատ խորի են գնում և սնումքը ստանում են

Հազի ներքին չերտերից։ Պետք ե առել վար նա ոի-  
րում և ավելի կավային հողեր։ Զրի պահառության  
ժամանակ դիմանում ե, բայց յերբ այդ պահկառու-  
թյունը յերկար ե տեղում, պահապում ե։

Առվույթ ցանելու համար հողը պետք ե նախա-  
պատրաստել հետեւյալ կերպ։ Նախ սետք ե մաքրել  
բոլոր տեսակի մոլախոտերից, ապա խորը վարել։  
Պետք ե ցանել շարքերով։ Շարքերը միմյանցից հեռու  
պիտի լինեն 15-18 սմ.։ Մեկ հեկտարին կդնա 20-25  
կիլո լավ, զտված սերմ։ Պիտի ցանել ապրելի վերջե-  
րին կամ մայիսի սկզբներին։ Լավ կլինի ողտագործել  
տեղական սերմերը, վորովհետեւ ուրիշ տեղից բերված  
սերմերը հաճախ մեր պայմաններում չեն ծրում։ Առ-  
վույթն առաջին տարին բերք չի տալիս, կամ յեթէ  
տալիս ե՝ շատ քիչ։ Այդ պատճառով անհրաժեշտ ե աշ-  
նանից այդ նույն հողամասում ցանել գարի կամ ցո-  
րեն, վորպեսզի իպուր մեկ տարի հողը չմնա առանց  
ողտագործվելու։ Մեկ հեկտար առվույթի ցանքից կա-  
րելի յե ստանալ մինչեւ 10 տոնն (600 փութ) չոր-  
եստ։ Առվույթը պիտի հնձել այն ժամանակ, յերբ  
արգեն սկսվում ե ծաղկել, վորպեսզի խոտի ամենա-  
մնդարար մասերը՝ ծաղիկներն ու տերեւները լրիվ  
շափով մնան խոտի միջ։

2. Կարմիր յերեխնուկ (սիրիսիրի) — կարմիր յե-  
րեխնուկը մեղ մոտ նոր կուլտուրա յե, միայն վերջերս  
են սկսել մշակել, վորոշ չափով Վարանցովկայի շրբ-  
ջանում։ Վայրի վիճակում նա շատ ե պատահում լիո-  
նային մարգագետիններում, վորտեղ, նրա խառնուր-  
դը այլ խոտերի հետ շատ հիանալի կեր ե անասուն-  
դը այլ համար։ Կարելի յե դուրսների կանաչ ու չոր-  
եսի համար։ Կարելի յե դուրսների կանաչ ու չոր-

ՀՅՈՒՅՔ յամբ համեւ վորպիս սկլոսացու բույս : Ծնողհիվ եթ լավ հատկությունների, անկառակած հետադայում կարմիք, յերեքնուկի ցանքերը պիտի շատ ընդորժակավեն : Զնայած իր լավ, սննդաբար լինելուն, այնուամենայինի նրանով անսառններին կերակրելիս պետք է



Նկ. 3. Կարմիք յերեքնուկ


շատ դժույչ լինել, վորովհետեւ կանաչ վիճակում կերակրելիս կորող և անսառնների վորը ուռել (անսառները տիմապանիս հիվանդաթրուն ստանան) և դրանից կատակեն :

կարմիք յերեքնուկի որմատը հազի մեջ շատ լարին է պառած, ցողունը խիտ և ճյուղավորվում և հասնում է ձու մի մետր բարձրության : Մաղիկները հավաքված են խիտ դլիխիկներով և վարդագույն են :

Հողի նկատմամբ պահանջուոտ չեն, իսկ ջրի նկատմամբ՝ լնդհակառակը : Նա շատ սիրում եւ կավային և կավա-ավաղային հողեր, մանավանդ, յերբ այդ հողերը կրով շատ հարուստ են : Բազմամյա բույս է : Մի անդամ ցանելուց մնում եւ 2-3 տարի (յերբեմն՝ 5-6 տարի) . լավ ջրելու դեպքում մկ ամառվա ընթացքում կարելի յերկու անգամ հնձել : Կարմիք յերեքնուկը կարելի յերեն ցանել ուրիշ բույսի հետ . որինակ՝ տիմոֆեյնվայի հետ : Այդ գեղագում շատ խոռ և ստացվում և անսառնների վորը ուռցնելու քիչ վախ կա : Մեկ հեկտարին կզնա 15-20 կիլո սերմ, յերբ այն ցանում են առանց վորեե բույսի խառնուրդի, իսկ յերբ ցանում են վորեե սիզախոտի հետ միասին, ապա կպահանջմի 10-15 կիլո . յերեքնուկի և նույնքան եւ սիզախոտի սերմեր : Յեթե կարմիք յերեքնուկը քաղցում և ժամանակին, ստացվում և հիանալի խոռ, իսկ ուշացնելու դեպքում՝ այն շատ կոպտանում և և զժվարամարս դառնում : Մեկ հեկտարից կարելի յետ ստանալ 3-6 տոնն խոռ : Միշտ պիտի ցանել տեղ, սերմ : Դրա համար անհրաժեշտ եւ յերեքնուկի ցանքերի մի մասը միշտ պահել սերմացու ստանալու համար : Մեկ հեկտարից կարելի յետ ստանալ 160-250 կիլոդ : սերմ :

3. Կարմիքան - կորինդանը վորպիս ողտակար կերպույս Զանգեզուրում և Նախիջևանում շատ վարդուց և մշակվում : Կայրի վիճակում պատահում և լեռնային մարգագետիններում, հատկապիս Ստեփա-

հավանի շրջանում : Ծնորհիլ այն հանգամանքի, զոր նա հողի և ջրի նկատմամբ այնքան ել պահանջութ չէ, ուստի մեզ մոտ նախալեռնային շրջաններում շատ հաջողությամբ կարող ե մշակվել :



Նկ. 4. Կորնդան

Կորնդանի արժատները հողի մեջ գնում ն մինչեւ 2-4 մետր խորությամբ, ցողունը շատ խիտ ճյուղավորվում ե և ունենում է մեծ քանակությամբ տե-

բեկներ : Մազմակները հավաքված են յերկար վողիկույցներով և վարդակարմիկ գույնի յեն :

Ինչպես առացինք, կորնդանը հողի նկատմամբ պահանջութ չէ. աճում ե ամեն տեսակ հողում, սակայն շատ սիրում է կրային հողեր : Իր արժատների յերկարության չնորհելի նա ջուր ստանում է հողի ստորին շերտերից : Չափազանց շատ ջրելու դեղքում կորըրգանը իրեն լավ չի դրում . նրա վրա առաջ են գալիս զանազան սնկային հիվանդություններ :

Նախքան ցանելը հողը պիտի լավ մշակել : Կարելի յե ցանել թի՛ աշնանը և թի՛ դարնանը : Պետք ե ցանել շարքերով, միմյանցից 20 սմ . հեռավորության վրա : Մեկ հեկտարին ցանում են 1-1,5 ցենտներ սերմ : Մեկ անգամ ցանելուց հետո մնում է 6-7 տարի (յերբեմն՝ մինչեւ 20 տարի) և ամեն տարի տալիս ե մի քանի հունձ : Մեկ հեկտարից ստացվում է 4-6 տոնն հիանալի խոտ : Կորնդանը յերեքնուկի նման անասունների խորը չի ուղեցնում, յերբ ել կերակրելիս լինենք : Մեծ ուշադրություն պետք է դարձնել նրա հնձելու ու չորացնելու վրա, վորովհետեւ յեթե ծաղկելու հենց առաջին շրջանում չհնձի և շատ կոշտանա, տերեկները կլամփեն և կսաւցվի վոչ սննդարար խոտ :

Կորնդանը ցանում են նաև աշնանացան կամ գարնանցան ցորենի հետ միասին :

Կորնդանը, գլխավորապես, ցանվում է խոտ ստանալու համար : Կարելի ցանել նաև արտատեղիներում խոշոր յեղջյուրավոր անասունների համար :

4. Վիկ.—Վիկը կարելի ցանել յերկու նպատակով .—նախ՝ խոտ ստանալու, յերկրորդը հատիկներ ստանալու համար, վորը նույնպես անարտաների հա-

Ֆար ծառայում ե վորովես կեր : Վայրի վիճակում պիտի  
դիմավորապես տարածված է մարդագետիններում ,  
ասդա, առուների յեղբերին և ընդհանրապես խոնավ տե-  
ղերում : Շատ է պատահում ցորենի ցանքերում , վոր-  
ովես մոլախոտ : Վիկն ունի իշխանիվ արմատ , վորը  
հողի մեջ այնքան ել խորը չի գցում . ցողունը թույլ է  
և փոփոք է : Նրա յերկարությունը 60-70 սմ . չի  
անցնում : Լավ ճյուղավորմելու դեպարտմենտական է մեջ



## Եկ. 5. Զանալիք պիտի

բանակությամբ տերելիներ, վորոնք կազմված են վի-  
նում մի քանի գույշ՝ փոքրիկ տերելիներ. տերել-  
ինը ծայրերին կան թելի նման մասեր (բելիկներ),  
վորոնց միջոցով փաթաթվում ե այլ բույսերի կամ  
վորե և հենարանի: Մաղիկները մանր են և մանիչա-  
կագույն: Վիկը շատ լավ աճում է կավաավազային և  
կավային հողերում: Զրի պակասության չի գիմանում,

իսկ ջերմության նկատմամբ՝ այնքան ել պահանջվում  
է:

Սովորաբար վիկը ցանում են վարսակի հետ միա-  
սին, վորպեսզի փաթաթվի նրա վրա, վորովհետեւ  
փոփած դրությամբ դժվար է հնձվում և բերքն ել քիչ  
ել լինում: Մեկ հեկտարին սովորաբար ցանում են 7-9  
կութ վիկի և 2-3 փ. վարսակի սերմերի խառնուրդ:  
Ցանքը կատարում են շարքացանով, վորպեսզի սերմ  
ստանալու համար աշխատանքները ըլժվարանան: Վիկ  
մշակելն առանձին աշխատանք չի պահանջում: Պետք  
ե հնձել այն ժամանակ, յերբ ամբողջն արդեն ծաղկել  
և ու սկսել պտղակալել: Հավաքելիս և չորացնելիս  
պետք ե զգուցչ լինել, վորպեսզի տերևներն ու ծա-  
ղիկները չթափվին: Մեկ հեկտարից ստացվում ե 3-6  
տոնն լավ խոտ: Յեթե վիկը ցանվում է սերմ ստա-  
նալու համար, առաջ պետք է ուղասել մինչեվ լավ հա-  
սունանա: յերբ լավ կգեղնի, նոր միայն պետք ե հըն-  
ձել: Պետք ե հավաքնել ցողուններով, խորձեր կապել  
և հետո կալսել տանել: Մեկ հեկտարից ստացվում  
է 1000-1200 կղ, սերմ և բավական քանակությամբ  
դարման, վորը նույնպես առանց վախճառալու կարելի  
յի տալ անասուններին: Անասոնապահական կոլտնտե-  
սություններում վիկի մշակության դարկ տալը մեծ  
նշանակություն կունենա կերպ արորեմի լուծման տե-  
սակետից թե՛ քանակի և թե՛ վորպակի տեսակետից:

5. Սուլդանի խոռ (Սուլդանկա) — Սուլդանի խոռը  
նոր կուլտուրա յե մեղանում։ Շնորհիվ իր մի շաբք  
գլան հատկությունների հետազայում մեծ տարա-  
ծություններ ե գրավելու։ Սուլդանի խոռը բարեխառն  
կլինա սիրող միամյա բույս ե, հողի վերաբերմանը

պահանջկուս չե, չորության շատ լավ և դիմանում:  
Մեկ ամառվա ընթացքում սուրբանի խոտը կարելի յէ  
հնձել 2-3 անգամ:

Սուլանի խոտը հացաղբիների ընտանիքին պատա-  
կանող բույս է, նրա արմատը փնջաձել է, հողի մեջ



նկ. 6. Սուլանի խոտ

խորը չի զնում, ցողունը հիմքից շատ խիտ ճյուղա-  
վորվում է (տալիս և շատ խիտ ճիմեր): Սուլանի խո-  
տի հողը պետք է պատրաստել անանից: Մշակելու աշ-  
խատանքները լավ կատարելու համար, անհրաժեշտ է  
շահել շարքացանով: Ցանքը վաշ պարնանը շպիտի

կատարել, վորովհետեւ դարձնան քիչ չերժության պահմա-  
նառով լավ չի ծլում ու աճում, վորի հետեւվանքով  
մոլախոտերը խեղդում են նրան: Ամենից լավ և ցանել  
այն ժամանակ, յերբ կորեկն են ցանում: Մեկ հեկտա-  
րին ցանում են 16-25 կլգ. սերմ: Սուլանի խոտի ծիլը  
շատ թույլ է լինում, այդ պատճառով պիտի ցանել և  
մ. վոչ խորը, այլապիս կարող է պատահել, վոր  
հաղի յերեսը դուրս չդա: Սուլանի խոտը պետք է քա-  
ղել չուտ, վորովհետեւ ուշ քաղելու դեպքում խոտը  
կոշտանում է և 2 բերք չի ստացվում: Լավ մշակելու  
դեպքում մեկ հեկտարից կարելի յէ ստանալ մինչեւ 65  
ցհնտներ լավ խոտ:

Սուլանի խոտը շատ կարելոր բույս է: Նրա ար-  
տը կարելի յէ ոդաղործել վորպիս արտատեղի խո-  
տը յեղջուրավոր անասունների ու խողերի համար,  
վորպիս ճմեռված լավ խոտ բոլոր տեսակի անասուննե-  
րի համար է, վերջապիս, վորպիս սիլոս:

### 5. ՀՅՈՒԹԱԼԻ ԿԵՐԵԲ

Անանապահության արտադրանքի բարձրացումը  
մեծապես կախված է նրանից, թե ինչպիսի կերերով  
ենք պահում անասուններին: Ինչպես հայտնի յէ ճմե-  
ռվել մեր անասունները կերակրվում են համարյատ բա-  
ցապահիս չոր կերերով, հյութալի կերեր չեն ստա-  
նում, այդ պատճառով ել ճմեռը նրանց կաթնապահու-  
թյունը պակասում է:

Մեր խոչոր տնտեսությունների խնդիրը պետք է  
լինի՝ ճմեռը նույնագիս անասուններին ապահովել  
հյութալի կերերով:

Այդ հնարավոր է արմատապտուղների ցանքերի


տաթածությունները ընդուրվածիելով և գրանց համար նոր հողեր հատկացնելով՝ այն անտեսություններում, վորաեղ մինչեղ այժմս այդպիսի կերեր չեն մշակվել:

1. Կերի նակնդեղը.—մեղ մոռ. Վորոշ շրջաններում (Դիլիջան, Կոտայք և այլն) մշակվում և վազուց ի վեր: Նրա առավելությունն այն է, վոր ձմեռը, նա իր հյութալիությամբ փոխարինում և ամառային կանաչ խոտին: Ճակնդեղը չատ բերքառատ կուլտուրա յեւ մի փոքր հողամասից ստացվում և մեծքանակությամբ բերք: Ճակնդեղը բոլոր անասուններն ել մեծ ախորժակով են ուտում: Հատկապես նրանով լավ և կերակրել կաթնատու անասուններին, վորովհետև ճակնդեղ ուտելիս կովերի կաթնատվությունը բարձրանում է:

Ճակնդեղը յերկամյա բույս է. առաջին տարին տալիս և տերեվներ և հաստացած արմատ, իսկ յերկրորդ տարին՝ յերկար ցողուն, ծաղիկներ և սղտուզ (սերծեր):

Անասուններին, վորպես կեր, տալիս են առաջին տարվա հաստացած հյութալի արմատները, իսկ տերեվներից կարելի յեւ սիլոս պատրաստել:

Կերի ճակնդեղի համար հողը պետք է սղտորապատել աշնանից, պիտի ցանել վաղ գարնանը, վորովհետև ուշացնելու դեպքում բերքի քանակը նույնազիս պակասում է: Կերի ճակնդեղի մի քանի տեսակը կա. դրանցից մեզ մոռ չատ լավ աճում են «Մամուա» և «Եկկենդորֆ» տեսակները: Պիտի ցանել շարքացանով. մեկ հեկտարին գնում է 20-25 կիլո սերմ: Շարքերը մի-



Նկ. 7. Եկկենդորֆի տեսակի կերի ճակնդեղ

Նկ. 8. Մամուա տեսակի կերի ճակնդեղ

Ելանցից հեռու պետք է մնեն 50-70., իսկ բռյաց  
բույսից՝ 85-40 սմ.:

Ցանելուց 10-15 որ հետո, ճակնդեղը ծլում է:  
Այդ ժամանակվանից ել պետք է սկսել մոլախոտերը  
քաղցանել և հողը փխրեցնել: Լավ բերք ստանալու  
համար անհրաժեշտ է հողը պարարտացնել կամ գոմ-  
ալբով, կամ հանքային պարարտանյութերով: Լավ  
և ժամանակին մշակելու դեպքում, մեկ հեկտարից  
կարելի յի ստանալ 40-50 տոնն ճակնդեղ:

2. Կերի գազարը—լավ. Համեղ սննդարար կեր և  
բոլոր տեսակի անառունեցի համար, հատկապես լավ  
կեր և համարվում մատղաջ և կաթնատու անառունե-  
ցի համար: Գաղարն ավելի սննդարար է, քան ճակն-  
դեղը, վորովհետել այսուղ չոր սննդանյութերի տո-  
կոսը հասում և մինչեվ 15-ի, իսկ ճակնդեղինը՝  
12-ի:

Բացի դրանից, գազարը առընդունել ավելի շատ և  
տալիս, վորը նույնպես լավ սննդարար կեր և անտ-  
սունների համար:

Կերի գազարը, ինչպես և ճակնդեղը յերկամյա  
բույս և, սակայն, բերքը կարելի յի ստանալ հենց ա-  
ռաջին տարվանից: Հողի նկատմամբ պահանջկու չե: Լավ  
կարող ե աճել նաև ավազային հողերում. կիմա-  
յի փոփոխությունը շատ քիչ և աղնրադառնում դազա-  
րի բերքատվության վրա: Գաղարի համար հատկաց-  
ված հողը պետք է պատրաստել աշնանից: Պետք ե աշ-  
խատել ընտրել այնպիսի հողամաս, վոր մոլախոտերով  
քիչ վարակված լինի: Մեկ հեկտարին ցանում են  
6-8 կելտ մաքուր սերմ, շարքերն իրարից պիտի չնել  
80-45 սմ. հեռավորության վրա, իսկ բույսը բույ-



Նկ. 9. Կերի գազար

սից՝ 10 մմ. Հեռավորության վրա: Պիտի ցանել չպետք քացանով՝  $2\frac{1}{2}$ —3 մմ. Խորությամբ՝ Վետաստումերով չի վարակվում, պարարտացնում են գոմադրով և հանքային պարարտանյութերով, լավ մշակելու դեպքում, մեկ հեկտարից ստացվում են 40-50 տոնն գտղար:

## 6. ՍԻԼՈՍԱՅԻՆ ԲՈՒՅՍԵՐ

«Սիլոսը՝ հունիսյան արոտ ե դեկտեմբերիմ»:  
«Սիլոսն անառանձների համար ձմեռը դարձնում ե ամառ»:

Այսպիս են արտահայտվում ամերիկացիները սիլոսի մասին:

Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման կարեվոր ճյուղերից մեկի՝ անասնապահության համար կերի բազա ստեղծելու հիմնական աղբյուրներից մեկը, վոլոր վերջին ժամանակներս խոշոր չափով ե կիրառվում մեզ մոտ, կերերի սիլոսացումն է: Սիլոսացման միջոցով անառանձներն աղաքահովում են ճշեռվա համար անհրաժեշտ քանակի կերով, և դրա հետևանքով բարձրացնում են նրանց արտադրողականությունը:

Մեր բոլոր շրջաններում կան սիլոսելու համար հարմար նյութեր, այդ պատճառով վոչ մի խորհունուսություն և կոլտնտեսություն չպիտի մնա առանց սիլոսի: Սիլոս պատրաստելու համար ոլտագործվում ե ինչպես հատուկ ցանքներից ստացված բույսերի մասսան, այնպես ել մոլախոտերը, վայրի բուսականությունը, բանջարանցային բույսերի մնացօրդները և այլն:

1. Ցեղապոտցորենը վարպետ սիրառայն: — Սիլոսի համար ցանվող կուլտուրաներից ամենակարեվորը յեղիպտացորենն է: Սիլոսացված յեղիպտացորենը հիմնալիք կեր և բոլոր տեսակի անասունների, հատկապես կաթնառու կովերի և մատղաշների համար: Անասուններն այն ուսում են մեծ ախտրժակով: Նա հեշտամտրությունը և հեշտացնում ե մյուս կերերի մարսողությունը:

Սիլոսացված յեղիպտացորենը կարող ե ամբողջ ձմեռն ապահովել անտեսությունը լավ և հյութաբի կերով, վորովհետև և հեկտար ցանքից ստացվում ե 50-60 տոնն մասսա՝ (յերբեմն ավելին): Յեղիպտացորենը պատկանում է հացաղղիների ընտանիքին, նրա արմատը փնջաձեվ է, հողի մեջ վաչ խորը գնացող: Ցողունը շատ բարձր է, յերբեմն համառում ե մի քանի 30 լիտր: Տալիս ե 2 տեսակ ծաղիկ գաղաթում՝ արածետրի: Տալիս ե 2 տեսակ ծաղիկ գաղաթում՝ իգական: Յեղիպտացորենն, իսկ տերեվածոցերում՝ իգական: Յեղիպտացորենը տաք յեղիբների բույս է, պահանջում ե բավական քանակությամբ ջերմություն: Ջուր շատ չի սիրում: Սիրում է սելվահողեր, ալաղակավային հողեր, աճում ե նաև կավային հողերում: Յեղիպտացորենի համար հողը պետք ե պատրաստել բերքը քաղեկուց անմիջապես հետո: Պետք ե վարել աշնանից և հետո պարնանն ել կրկնավար անել՝ ավելի խոր (13-18 ս. մետր): Ցանքը պետք ե սկսել այն ժամանակ, յերբ հողն արդեն հանդիպել առաջացել է, վորովհետև վաղ ցանած յեղիպտացորենը ցրտից կարող ե չծլել, իսկ յերբեմն ել փոռում է: Մեկ հեկտարին ցանում են 30-40 կիլոգր. (հայած սերմերի մեծությանը, վորքան խոչոր են, այնքան չափ պիտք ե ցանել): Յեղիպտացորենը վորովի չափանիքի բույս, ցանվում ե շարքացմանը:



բայց սիլոսի համար ցանելիս կարելի յէ նուն շաղացած  
անել։ Սիլոսի համար ցանված յեղիպտացորենը պետք  
ե հավաքել և կաթնային հասունության՝ ժամանակ,  
այսինքն՝ այն ժամանակ, յերբ հատիկի մեջ դեռ չուր  
շատ կա։

2. Արևածաղկից պատրաստած սիլոսը իր վորակով  
ու հատկությունով հետ չի մնում յեղիպտացորենի  
սիլոսից։ Սրեվածաղկիը միամյա բույս է, նրա բար-  
ձրությունը հասնում է 2—2½ մետրի։ Արմատը շատ  
լավ ե ճյուղավորվում։ Ցողունը տալիս է մեծ քանա-  
կությամբ խոշոր ձվածել տերևներ։ Նաղիկները դեղ-  
նագույն են և հավաքված են լինում մեծ քանակու-  
թյամբ, այսպես կոչված՝ զամբյուղներով։

Սրեվածաղկի համար պետք ե հատկացնել լավ և  
պարաբռացրած հող, վորովհետև նա հողից մեծ քա-  
նակությամբ սննդարար նյութեր ե վերցնում։ Հողը  
պետք ե վարել աշնանից, իսկ դարնանը կրկնահերկ  
անել։ Ցրտադիմացկուն է, այդ պատճառով արեվա-  
ծաղկիը կարելի յէ ցանել ավելի վաղ և ավելի ցուրտ  
ըրջաններում, քան յեղիպտացորենը։ Շատ ջուր չե սի-  
րում, այդ պատճառով չպիտի ցանել խոնալ և ճահ-  
ճոտ տեղերում։ Արեծաղիկը նույնպես պետք ե ցանել  
շարքացանով՝ շարքը շարքից 50 սմ. հետո։ Մեկ հեկ-  
տարին բավական կլինի 25 կիլո սերմ (զտված)։ Ծլե-  
լուց հետո պիտի նուրացնել այն հաշվով, վոր ամեն  
մի բույսը մյուսից 30—40 սմ. հեռավորության վրա  
դանվի, վորովհետև, ինչպես վերն ասացինք, արևա-  
ծաղկիը շատ սննդով և պահանջում։ յերբ իրար շատ  
մոտ են լինում, միմյանց խանդարում են և լավ չեն  
ամռաք։ Ծլելուց հետո անհրաժեշտ ե նորե մի գանի ան-

Նկ. 10. Յեղիպտացորենի քնողանության անունը

շամ քողհանել, զորդացի մոլախտակը չկանգնի ա-  
րելածաղիկին։ Պետք է ջաղել այս ժամանակ, յերբ  
բուլորը ծաղկել են և վճռու սերմեր արգեն դանդում են



Նկ. 11. Արեածաղիկ

մկանային հասունության։ Վիճակում ։ Քաղաք և  
անդապներով կամ խայտաբերան դանակայի՛ կոբերով

34

ցողունները 6-8 սմ։ Հողից բարձր։ Մեկ հեկտարից  
կարելի յի ստանալ 50-60 տոնն սիլոսի մուսա։ Արե-  
վածաղիկը շատ կարեվոր սիլոսային բույս է, ևս մեզ  
մոտ կաճի համարյա բոլոր չքաններում։ Վճին մի  
խորհանուեաություն և կոլտնտեսություն պետք է արե-  
վածաղիկ ցանի սիլոսի համար։



Նկ. 12. Մեղրալութան (եշի յոնչա)

Բացի յեղփակացորենից և արեվածաղիկից, սիլոսի  
համար ցանվող կուլտուրաներից նշանակոր են նաև  
իրենց բերքի քանակով ու վորտերով նաև մեղրալու-  
թանը (եշի յոնչա), այսաւ, վիկը՝ վարդակի մետ, յե-  
րենուկը և շատ ուրիշ բույսեր։

35

Վայրի վիճակում բուսադ խռովերից մեծ մասը կա-  
զմվի յե ողտագործել սիլոս պատրաստելու համար։  
Դաշտավայրի համար առանձնապես մեծ նշանակու-  
թյուն ունի յեղեգը, վորի սիլոսը վաստ չեն ուստամ  
անասունները։ Վերջապես, սիլոսի համար չտա լավ  
նյութեր են մեր ցանքերում, հարսներամ և բանջա-  
րահոցներում պատահող մոլախոտերը, վորոնց մին-  
չել այժմ մենք չենք ուստագործել։



21.749

20 ԿՈՂ. (1<sup>1/2</sup> մ.)



Е. НАЗАРЯН

# КОРМОВАЯ БАЗА ЖИВОТНОВОДСТВА

Գործադат ССР Армении  
Эревань—1961